Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 737 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանի Հանրապետության համայնքներում բնակվող անձանց ծալովի մահճակալների տրամադրում սոցիալական աջակցության նպատակով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆորնիա 91355, Լոս Անջելես
4.	Ծրագրի կատարողը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, քաղ. Երևան, Վիկտոր Համբարձումյան փողոց 2-րդ շենք, 37 բնակարան, ՀՎՀՀ՝ 00130776
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ՝ Մասիս, Արտաշատ, Արմավիրի մարզ՝ Արմավիր, Գեղարքունիքի մարզ՝ Մարտունի, Վարդենիս, Կոտայքի մարզ՝ Հրազդան, Վայոց Ձորի մարզ՝ Արենի խոշորացված համայնքներ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	12,500,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ՝ Մասիսի, Արտաշատի, Արմավիրի մարզ՝ Արմավիրի, Գեղարքունիքի մարզ՝ Մարտունիի, Վարդենիսի, Կոտայքի մարզ՝ Հրազդանի, Վայոց ձորի մարզ՝ Արենի խոշորացված համայնքների համայնքապետարաններ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	03.11.2023 թվական – 30.11.2023 թվական
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ծալովի մահճակալների պատվիրում և պատրաստում՝ 7,500,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել սկսած 03.11.2023 թվականից մինչև 11.11.2023 թվականը: 2. Կահույքի մատակարարում և տեղադրում՝ 5,000,000 դրամի չափով, սկսած 12.11.2023 թվականից մինչև 30.11.2023 թվականը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շարժական ծալովի մահճակալ ներքնակով-500 հատ-12,500,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

20.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ